Մասնակցության պայմաններ
Դիմորդները պետք է.
• Լինեն ՀՖԿՍՊԻ-ի դասախոսներ
• Ներկայացնեն դասախոսական շարժունություն իրենց ակադեմիական ոլորտին համապատասխան, ամբիոնի նպատակներին և ՀՖԿՍՊԻ-ի միջազգային ռազմավարությանը համահունչ

Շարժունության մանրամասներ
• Շարժունության տեսակը՝ Էրազմուս+ դասախոսական շարժունություն (KA171)
• Ժամանակահատված՝ 2026 թվականի գարնանային կիսամյակ
• Տևողությունը՝ 7 աշխատանքային օր (ներառյալ ճանապարհորդության օրերը)
•Պետք է դասավանդել առնվազն 8 ժամ

Ֆինանսական աջակցություն
Ընտրված մասնակիցները կստանան Էրազմուս+ դրամաշնորհ՝ հոգալու.
• Ճանապարհորդության ծախսերը՝ համաձայն ՀՖԿՍՊԻ -ի և ընդունող հաստատության միջև հեռավորության.
• Օրապահիկը
Դրամաշնորհը համարվում է ֆինանսական աջակցություն և կարող է լիովին չծածկել շարժունության ընթացքում կատարված ծախսերը:

Դիմումի ընթացակարգը
Դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
1. Էրազմուս+ դասախոսական շարժունության դիմում (էջ 5).
2. Մոտիվացիոն նամակ (էջ 7), որը ներառում է շարժունության նպատակը և վերջնարդյունքները.
3. Europass CV.
4. Անգլերեն լեզվի իմացության վկայական:

Դիմումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝
io@sportedu.am
կամ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժին:
Փաստաթղթերը ընդունվում են մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ը:

Ընտրության չափանիշներ
Դիմումները կգնահատվեն հետևյալի հիման վրա՝
• Շարժունության ոլորտի համապատասխանությունը դիմորդի ակադեմիական ոլորտին և ՀՖԿՍՊԻ -ի ռազմավարական առաջնահերթություններին:
• Դասավանդման որակի և ինստիտուտի զարգացման վրա ակնկալվող ազդեցությունը:
• Հյուրընկալող հաստատության հետ երկարաժամկետ համագործակցության մոտիվացիան և ներուժը:

• Նախապատվությունը կտրվի այն դիմորդներին, ովքեր նախկինում չեն մասնակցել Էրազմուս+ դասախոսական շարժունակության:

Արդյունքների հրապարակում

Դիմորդները կտեղեկացվեն արդյունքների մասին մինչև 2025 թվականի նոյեմբերի 10-ը:

- Շարժունությանը մասնակցող դասախոսի, ինստիտուտի և հյաուրընկալկող կազմակերպության միջև պետք է կնքվի եռակողմ համաձայնագիր (Etasmus+ Mobility Agreement: Staff Mobility for Teaching)
- Լիարժեք իրականացնել նախօրոք համաձայնեցված ծրագիրը
- Շարժունությունից հետո ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և հաշվետվությունները Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժին:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել՝
Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժին

io@sportedu.am
+374 10 55 33 10 - 122
www.sportedu.am